

ցուն ձայն՝ յօրինեալ բարբառէր. տեսեր զշնորհատե-
սիլ դրուածոցն եւ մաքուր ձեռացն չափուց յօրի-
նուած, փա՛ռք յօրինողին. լուար զորս ի քերցն ու-
սեալ զտաղաչափութիւն զերգոց հիւսմանց՝ ընդ եղա-
նակին եւ ինքն առեալ եւս առաւել գեղգեղեալ քաղցր
երգէր: Եւ արդ չորեքտասան ամսոց էառ զվախճան,
զորոյ թէ զմահն պատմել կամիցիմ՝ զարմանալի է
լսողաց, իբրու կատարելապէս բարւոյ իմիք պատշա-
ճաւորի ճառս եզրակացութեամբ, բայց նեղէ զիս կա-
րօտ յիշումն ճառիս արտասուօք յերկարել, եւ երկըն-
չիմ զի մի եւեթ դատապարտիցիմ յիւր տուօղէն, որ
ընկալաւն զնա այսօր ի դասս լուսեղինացն: Բայց
փոքր մի ասացից զի ոչ մերկանայցէ բանս, որոյ
ձեռքն ի ձեռս մեր էր մինչեւ յելս սրբազան շնչոյն
եւ տակաւին եւ ի կատակօրէն բանս իմ ժպտելով
հայէր եւ այլ եւս չկարէր խօսել. զէքէնն ստիպեալ
տալն իմ յուտել՝ ձեռքն ի ձեռս յետ դարձնէր աղ-
նիւ խոհեմութիւնն, մինչեւ գգուեցեալ լինէր ի հրեշ-
տակաց առժամայն: Յորում կէտի զկէտն էարկ սպեաց
ի սիրտ իմ անելանելի՝ ըստ ծաղկին կարմրերփեան որ
ունի փորումն զսեաւ կէտսն անջինջ նշանաւ: Խոցս
էր անողջանալի ըստ կարծեաց պատահման՝ թէ ան-
մեղն վասն իմ մահացաւ, զի ողջն եւ ամբողջն¹⁾ որ-
պէս թէ խեղդամահ ի միում աւուր՝ ունէր զտեսիլն
յաւանդումն հոգոյն: Արդ, վա՛յ ինձ եւ եղուկ է զիս՝
զի ոչ համարեցայ արժան լինիլ հայր այնպիսի գերա-
զարդ ուշմի, փարթամառատ մտաց ընդունակի եւ
փառաւոր զգայարանաց, զի ոչ թէ ըստ կերպի գե-
ղեցկութեան ասեմ, այլ թէ զարմանալի ուշմութեան
ազատաբարոյ խոհեմութեան շնորհացն: Տե՛ս, որդեա՛կ
իմ, կարծեմ եւ ես թէ ծանակիմ ի լսողաց ի ճառս

1) անողջն.